

ուածին համաձայն, քաղաքականութեամբ չէ զբաղած, այլ իր բոլոր ջանքերը և հասոյթները գործածած է Թրքահայ ժողովուրդին նիւթական և տնտեսական պայմաններուն բարւոյցումին, ինչպէս նաև մտաւորական ու բարոյական զարգացումին: Արդէն այդ բանն է որ ցարդ իր յաջողութեան պատճառը եղած է, և դարձեալ մեր ընկերակցութեան վստահութիւնն կը ներշնչէ ապագային համար, — սերտիւ համոզուած որ՝ պիտի բաւէ որ ցոյց տայ թէ ինչ օգտակար ձեռնարկներ կրնայ ընել, պատշաճեցնելով իր գործունէութիւնը ներկայ նոր հանգամանքներուն, որպէսզի ամէն կողմէ օգնութիւններ հասնին իրեն: Անցեալը լիուրէ ապացուցած է թէ՛ մեր Ընդհանուր Միութիւնը միշտ կրնայ ապաւինիլ հանուր Հայութեան համերաշխութեան և անձնուիրութեան, ամէն անգամ որ խնդրը ազգասիրական գործի մը վրայ է:

ԱՏԵՆԱՊԵՏ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ

Գահիրէ, 50 Ապրիլ 1914

— 222 —

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան

8-րդ սարեղարձը.

Անցեալ մայիսի 10-ին մեծ հանդիսով տօնել են եզրիպտոսի Գահիրէ քաղաքում Հ. Բ. Ընդհանուր Միութեան 8-րդ տարեգարձը: Միութիւնը, իբրև բարեգործական ընդարձակ կարևոր հաստատութիւն, վայելում է Վսեմափայլ Տ. Պօղոս փաշայ Նուբարի հովանաւորութիւնն և ունի Տաճկաստանում և Ամերիկայում իւր զանազան ճիւղերը: Միութիւնը իւր ստորադրեալ ճիւղերով անպայման մեծ չափով նպաստում է Տաճկահայոց և՛ տնտեսական և՛ կրթական գործին: Կանոնաւոր հիմունքների վրայ է դրուած գործը և Միութեան անդամները մեծ եռանդով, իրենց ջերմ աջակից նախագահ Վսեմ. Տէր Պօղոս փաշայի հետ, վարում են այդ չափազանց օգտակար ընկերութեան գործը: Միութեան 8-րդ տարեգարձի հանդիսին ներկայ են եղել Վսեմ. Տ. Պօղոս փաշան իւր ընտանիքով և այլ հայազգի ու օտարազգի

հիւրեր. Վսեմ. Պօղոս փաշան հանդիսին խօսել է հետևեալ ճառը.

«Սլրելի հայրենակիցներս.

«Զեմ գիտեր ինչպէս յայտնել ձեզի թէ մըքան երջանիկ կ'զգամ ինքզինքս, երկու տարուան բացակայութենէ վերջ ձեր մէջ գտնուելով, տօնելու համար մեր Ընդհ. Միութեան գոթութեան Ցրդ տարեդարձը:

«Ինձի համար մասնաւոր գոհունակութեան պարագայ մ'է հաստատել որ մեր Ընկերակցութիւնը իր Ատենապետին բացակայութենէն չէ ազդուած բնաւ և թէ աւելի ևս բարգաւաճելու և զօրանալու առիթ գտած է: Երբ 1912 մայիսին՝ վերջին անգամ հաւաքուեցանք, Միութիւնը 6,499 անդամ ունէր և 96 մասնաճիւղ զանազան երկիրներու մէջ. մինչդեռ այսօր 142 մասնաճիւղ ունի 8,533 անդամներով: Իր վարժարաններուն թիւը, որքանոցով մէկ տեղ, 41-ի հասած է Հայաստանի և Կիլիկիոյ մէջ, ուր 2,000-է աւելի ուսանողներ կ'յաճախեն:

«Ատոր մէջ կ'գտնեմ փաստ մը իր յարաճուն ժողովրդականութեան և ապացոյց մը, ինչպէս մենք համոզուած էինք Միութիւնը հիմնելով, թէ անիկա կ'համապատասխանէ իրական պէտքի մը:

«Ամէն երկիրներու մեր հազարաւոր հայրենակիցները, որ փութացած են մեզի միանալ՝ հասարակաց գործին աշխատելու համար, ցոյց կուտան ատով իսկ թէ թափանցած են Միութեան ազդօգուտ և հայրենատիրական նպատակին, Թուրքիոյ Հայ ժողովրդին նիւթական և քարոյական վերականգնումին համար:

«Նպատակը զոր աչքի առջև ունէինք, երբ մեր Ընկերութիւնը ստեղծեցինք, և զոր աւելի որոշապէս ուզեցինք մատնանշել իրեն տալով «Ընդհանուր Միութիւն» անունը, զուք գործնականապէս իրագործեցիք այն կատարեալ միութեամբը, որուն օրինակը տուիք և որ է ու միշտ պիտի ըլլայ մեր զօրութիւնը:

«Այն յոյժ քաջախոհական արդիւնքները զոր հայեաղքներու և գործունէութեան այս համաձայնութիւնը ցարդ յառաջ եերաւ, մեզի թոյլ կուտայ վստահութեամբ նկատելու Հայկական Բարենորոգումներու յաջողութիւնը, որուն այժմ պարտաւոր ենք նուիրել մեր բոլոր ջանքերը:

«Որովհետեւ վերջապէս հառանք այն վարկեանին, ուր Բարենորոգումները, այնքան երկար ատենէ ի վեր սպասուած,

գործադրութեան ճամբուն մէջ պիտի մտնեն: Դիտէք, թերթերուն մէջ կարգացած ըլլալով, թէ Բ. Դուռն անուանեց երկու Ընդհանուր—Քննիչներ և ասոնք Կ. Պոլիս ժամանած են արդէն, ուրիշ քիչ ատենէն իրենց պաշտօնին գլուխն անցնելու համար ճամբայ պիտի ելլեն:

Եւստ պէտք չեմ տեսներ Հայկական Նահանգներուն յատուկ Բարենորոգումներուն քննութեան կամ նկարագրութեան ձեռնարկել: Ըստ իս, ասոնք կ'ամփոփուին զանազան վարչական կարգադրութեանց ամբողջութեանը մէջ, որ նպատակունին և որոնց հետեանքը պիտի ըլլայ վերահաստատել կարգ ու կանոնը,—հոն ուր այժմ միայն խռոնակութիւն կայ,—ասպահովութիւնն և արդարութիւնը,—մինչ այսօր միայն խռովութիւնն ու զեղծում կայ: Եւ այս առիւթները ձեռք պիտի բերուի մեր հայրենակիցներուն լայն մասնակցութեամբ՝ ժանտարմըրի և բօլիսի, Նահանգային փողովներուն, Դատարաններուն և հանրային պաշտօններուն,—այս ամէնն եւ ընտանիք Ընդհ. Քննիչներուն իրական հսկողութեան տակ: Այդ հսկողութիւն աւելի ազդեցիկ պիտի ըլլայ, որովհետեւ Ընդհանուր Քննիչներն իրենց պայմանագրութեան տասնամեայ շրջանին պիտի չկրնան հրաժարեցուիլ և իրենց իրաւասութիւններն ալ ընդարձակ են:

«Այդ փութկոտութիւնն ու բարեյօժարութիւնը զոր Բ. Դուռը ցոյց տուաւ ընտրելու ընդհ. քննիչները, անմիջապէս որ թեկնածոներու ցանկը Պետութեանց կողմէ իրեն ներկայացուեցաւ, շատ մը հաւատարմութիւն աւելի լաւ ցոյց կուտայ թէ Սոմ. Կառավարութիւնն ինչ աստիճան ըմբռնած է այսօր բարենորոգումները գործադրելու անհրաժեշտութիւնը, և ասոնց կարենալթիւնը՝ իրրեւ էական ազդակ Պետութեան վերականգնումին և զօրացումին: Եւ այս բանն իսկ է որ թոյլ կուտայ մեզի այլ ևս չտարակուսելու թէ ասոնք քիչ ատենէն պիտի գործադրուին և թէ մեր հայրենակիցները պիտի կրնան վերջապէս խաղաղութեամբ ապրիլ և աշխատիլ: Բայց բարենորոգումներու իրադրժումին հետ մեր հայրենակիցներուն վիճակն այնպիսի արմատական փոփոխութիւն մը պիտի կրէ որ այլ ևս պէտքերը միեւնոյնը պիտի չըլլան և հարկ պիտի ըլլայ բարեփոխել նաեւ Միութեան գործունէութիւնը, նոր հանգամանքներուն պատշաճեցնելու համար: Մինչև ցարկ մեր աշխատանքը կայացած է մասնաւորապէս նպատակներ յատկացնելու մէջ՝ Հայաբնակ դաւառներու մէջ տիրող խռովեալ վիճակին զոհերուն և վարկեր հաստատելու յօդուտ կրթական ձեռնարկներու:

Եւայց ստոյգ է, որ ասպահովութիւնն վերահաստատուելուն

պէս և բարենորոգումներէն սպասուած արդարութեան Ռէ-
փիմին հետ, մեր զիւղացիները պիտի կրնան լըջօրէն զբաղուիլ
հողագործութեամբ և մեծ մղում տալ անոր, եթէ, մանաւանդ
սկիզբները, ազգու ժանդակութիւն մը գտնեն, ըսն մը զոր
մեր Միութիւնը, կ'սիրեմ՝ յուսաւ, պիտի կրնայ իրենց ընծայել
գործնական ձեռք մը տակ:

«Մանրամասնութեանց մէջ պիտի չմտնեմ առ այժմ, թայց
կ'գոհանամ ըսելով որ Մենտիքաներու և հողային վարկի ընկե-
րութեանց կազմութիւնն անհրաժեշտ պիտի դառնայ ընդհուպ,
և կասկած չկայ որ Միութեան բերելիք սատար անոնց համար
մեծ օգտակարութիւն մը պիտի ունենայ:

«Նոյնպէս օրինակ մը ևս յիշատակելու համար, պէտք
պիտի ունենանք աւելի ևս ընդարձակելու մեր մասնակցու-
թիւնը կրթական գործերու մէջ, որ այլ ևս արգելքներէ չվախ-
նալով պիտի կրնան ազատօրէն բարգաւաճիլ: Անտարակոյս,
այսքան ընդարձակ ծրագիր մը նորանոր հասոյթներու պէտքը
զգալի պիտի ընէ. թայց արդէն ինքնաբեր աջակցութիւններ
սիրայօժար կ'ընծայուին մեզի, և անցեալին օրինակը մեզի
բաւական սպասուեցած է որ մեր բարեկամները երբէք չեն
զլացած իրենց անձնուիրութիւնը, ամէն անգամ որ մեր Ա-
սիաբնակ հայրենակիցներուն օգնութեան ձեռք կ'արկառելու
խնդիր եղած է, որպէս զի արդ ներքի ըլլար մեզի տարակու-
սիլ իրենց օժանդակութեանը մասին ապագային համար:

«Պիտի չուզէի վերջացնել խօսքս, իմ սիրելի բարեկամներս,
առանց շնորհակալ ըլլալու ձեզի, ամենքիդ ալ, Միութեան
անդամներ, որ եկած էք հոս, ձեր անձնուիրութեան և հաւա-
տարմութեան համար՝ զէպի մեր սիրելի Միութիւնը, որուն
մէկնոր ապացոյցը կուտաք այս հանդէսին ներկայ գտնուելով:

«Պարտք կ'զգամ նաև շնորհակալութիւնս յայտնելու Գեր-
թորգոմ Եպիսկ. Գուշակեանի, որուն եզիպտոս ժամանումը
ողջունելու բախտն ունիմ, և որ եկած է մեր գաղութին գլուխ
անցնելու: Ն. Գերապատուութիւնը մեր մէջ ներկայ գտնուե-
լով՝ Ընդհ. Միութեան հանգէպ իր տաճած հողագործութեան
հաւատարմքը կուտայ, որուն համար իրօք յատկապէս հաճելի է
մեր երախտագիտութիւնը յայտնել իրենս»:

